

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՐԵՄԱԹԱՑԻ ՅՈՒՇԵՐԸ

Այնպես կը պատահի որ յետ Քրիստոսի, 70-ական թուականներուն օր մը մարդ մը Աղեքսանդրիոյ Մատենադարանի շէնքին սրահը կը մտնէ, եւ կը բարեւէ իրեն ծանօթ մատենադարանապետին, ու կը պատրաստուի նստիլ սեղանի մը վրայ երբ մատենադարանապետը մօտենալով կը փսփսայ ականջին.

«Տիմիթրէոս, նոր բան մը ստացած ենք, կը փափաքէի՞ր տեսնել: Հռոմէացիներ Երուսաղէմը ամբողջովին քանդած են եւ հիմա կը փորձեն մաքրել աւերակները, եւ կը վստահեցնեմ քեզ թէ գրեթէ ոչինչ մնացած է այդ քաղաքէն»:

Տիմիթրէոս գլուխով տուաւ համաձայնութեան նշանը ըսելով. «Անպայման», որովհետեւ Երուսաղէմի գրաւումն ու բնաջնջումը, ամբողջ Հռոմէական աշխարհով մէկ լսուած էր. «Բայց եւ այնպէս» շարունակեց մատենադարանապետը «խելքը-գլուխը զինուորական մը կար, որ փորձած է փրկել մի քանի ձեռագիրներ եւ ղրկած է մեզի: Քննեցի մեզի ղրկուած ձեռագիրները, մասնաւոր արժէքաւոր բան մը չկար, սակայն ձեռագիր մը գտայ, որ կ'երեւի հրեայ հարուստ իշխանաւորի մը յուշերը եղած ըլլան, եւ գիտնալով թէ դուն հոս-հոն պատահած բաներ կը սիրես, մէկ կողմ դրի քեզի համար, երկար չէ: Տուն տա՛ր հետդ եւ վստահ եմ որ ժամանակիդ կէս ժամին պիտի արժանանայ»:

Հազիւ տուն հասած Տիմիթրէոս անհամբեր հետաքրքրութեամբ բացաւ ձեռագիրը, որ կը սկսէր հետեւեալ բառերով.

«Ինծի այնպէս կը թուի թէ իմ հետեւեալ փորձառութիւններս զորս ունեցայ տարիներ առաջ, պիտի արժէր արձանագրել զաւակներուն եւ անոնց զաւակներուն համար, հետեւեալ պատմութենէն գլուխ մը միայն, որ օր մը կրնայ դառնալ երկա՛ր պատմութիւն»:

Թերեւս այս մէկը չհետաքրքրէ աշխարհը, բայց դուք՝ որոնց համար գրի առած եմ, անպայման լսած էք մանկութեանս պատմութիւնը Արեմասիա գիւղին մէջ, եւ ապա մեկնումս իմ գիւղէս Երուսաղէմ: Նաեւ դուք անպայման տեղեակ էք թէ որքան ծանր աշխատանք է ետք ես կրցայ դառնալ հանրածանօթ օրէնքի մարդ, եւ ապա ընտրուեցայ անդամ Սանհետրինի, եւ արդէն յիսուն տարեկանիս Երուսաղէմի կարեւոր դէմքերէն մէկն էի:

Անշուշտ Սանհետրինը կազմուած էր Երուսաղէմի ամենայարգելի մարդոցմէ, սակայն անոր մեծաւորէն երբեք չէի խորթեր, որովհետեւ ինքնահաւան եւ դաժանաբարոյ մէկն էր, դպիր կամ Ղեւտացի ըլլալէ աւելի դիւանագիտութեամբ կը զբաղէր: Ինծի ամենամօտ եղող անձը՝ Նիկողիմոս անուեով, ազնուական ու հոգիով բարի անձ մըն էր, մանաւանդ կարող անդամ Սանհետրինի, որ օր մը երբ առանձին էինք ըսաւ. «Յովսէփ, անցեալներս դէպք մը պատահեցաւ, որուն ներկայ էի եւ զիս չափազանց խռովեց: Երիտասարդ Գալիլիացիի մը հանդիպեցայ, որ Պասեքի առիթով Երուսաղէմ կը գտնուէր Տաճարի սրահներէն մէկուն մէջ եւ կը խօսէր խումբ մը մարդոց հետ մօտեցայ եւ ուզեցի լսել թէ ի՞նչ կ'ըսէր, եւ այնքան տպաւորուեցայ իր խօսքերէն, որ հետաքրքրուեցայ եւ գտայ թէ ուր կը մնար, այնպէս որ այդ երեկոյ իրեն գացի եւ ժամերով խօսակցեցանք: Իրերու խորքը թափանցելու կարողութիւն ունեցող մէկն էր, սխալած պիտի չըլլամ եթէ ըսեմ, որ ան բարդ խնդիրներու մէջ պիտի իյնայ,

եթէ Սանհետրինի մեր բարեկամները լսեն թէ ան ի՞նչ կ'ըսէ: Բայց ես խորապէս կը հաւատամ, որ ան բարութեան մարմնացում է, եւ իր տեսակէտները հաւասարակշռուած են, տեղին ու սրտամօտ:

Մեր խօսակցութիւնը բաւական երկարեցաւ, բայց պիտի չուզէի հոս մանրամասնել: Այնպէս մը պատահեցաւ, որ մի քանի ամիսներ ետք գործի բերմամբ Գալիլիա մեկնիմ: Հոն լսեցի թէ ինչպէս ամէն ոք կը խօսէր այս երիտասարդ, Յիսուս կոչուող անձին մասին: Ան ուր որ երթար մեծ հետաքրքրութիւն կը ստեղծէր: Որոշեցի հետեւիլ իրեն, տեսայ թէ ինչպէս բազմութիւններ կը հետեւէին իրեն, լսեցի իր խօսքերը ու տեսայ թէ ինչպէս ան ֆիզիքապէս կը բուժէր հիւանդներ: Տարօրինակօրէն, իմ Փարիսեցի ծանօթներս անդադար կը քննադատէին զինք, սակայն սովորական ժողովուրդը մեծ ուրախութեամբ կը հետեւէին իրեն, լսելու անոր մխիթարող ու բուժիչ խօսքերը: Վերջապէս, օր մը դարձեալ առիթը ունեցայ անձնական խօսակցութիւն մը ունենալու հետը, ու ան զիս մեծապէս տպաւորեց, ինչպէս տպաւորած էր Նիկողիմոսը: Ան իւրայատուկ ու բացառիկ կարողութիւն մը ունէր զԱստուած իրականութեան վերածելու եւ միաժամանակ շեշտելու մարդուն կարեւորութիւնը: Փարիսեցիներու եւ Դպիրներու յարուցած անիմաստ խնդիրները զինք երբեք չէին վախճներ, սակայն ան անպայմանօրէն կ'անդրադառնար թէ անոնք որեւէ ատեն ի զօրու էին վտանգելու ո՛չ միայն իր ազատութիւնը, այլ նոյնիսկ իր կեանքը: Զուգեցի հոն գտնուողներու ներկայութեան իմ դիրքս վտանգել, սակայն առիթը ունեցայ իրմէ խնդրելու, որ երբ Երուսաղէմ գար անպայման զինք դարձեալ տեսնէի: Ինք ալ իր կարգին շեշտեց թէ ինք եւս պիտի ուզէր հանդիպիլ ինծի:

Դարձեալ ամիսներ ետք, Պասեքի շրջանն էր, այն օրերուն, երբ Պիղատոս Պոնտացի Հռոմէացի կառավարիչը դարձած էր: Ան իր բռնութիւններով ինքզինք ատելի դարձուցած էր ժողովուրդին, սակայն Սանհետրինի անդամները որոշած էին հետեւիլ անոր քաղաքականութեան: Ասոնք թէեւ կ'ատէին իրար, սակայն մղուած իրենց անձնական հաշիւներէն երբեմն կը համագործակցէին, այս կը պահանջէր Երուսաղէմի քաղաքականութիւնը:

Պասեքի առաջին օրը, յանկարծ տակնուվրայութիւն մը սկսաւ Տաճար տանող փողոցներուն մէջ: Ուղեցի գիտնալ թէ ի՞նչ կ'անցներ կը դառնար եւ դուրս ելայ, որովհետեւ այդ տօնական օրերուն Երուսաղէմ գտնուող բազմահազար ուխտաւորներէն ամէն ինչ ակնկալելի էր: Յանկարծ նկատեցի, որ ամբոխը դէպի իմ կողմս կու գար: «Ի՞նչ պատահած է» հարցուցի անցորդի մը, որ պատասխանեց ըսելով.

«Մի քանի Գալիլիացիներ են, որոնք իրենց նահանգէն եկած մէկու մը համար Զիթենեաց լեռնէն թափօրով հասած են հոս»:

Անմիջապէս յիշեցի Գալիլիացի Յիսուսը եւ տակաւին բոլորովին չըմբռնած անցուդարձերը, յանկարծ տեսայ զինք համեստօրէն նստած աւանակի մը վրայ, բան մը որ չխորհեցայ թէ ատով պիտի կարենար պէտք եղածին չափ տպաւորել այդ բազմութիւնը: Ան շրջապատուած էր արմաւենիի եւ ձիթենիի ճիւղեր շարժող հարիւրաւոր մարդոցմով, որոնք կը կանչէին. «Ովսաննա՛ ի բարձունս, օրհնեալ որ գայ յանուն Տեառն»: Հետեւեցայ բազմութեան, որ հասաւ Տաճարի արտաքին մեծ սրահը: Ան մի քանի վայրկեան դիտեց շուրջը եւ տեսաւ չարաչար շահագործումը այդ սուրբ շրջապատին, ուր լուծայափոխներ Տաճարի տուրքի դրամ կը մանրէին, իսկ անդին ուրիշներ սեղանին զոհի համար աղանձներ եւ նուէրներ կը ծախէին, եւ անշուշտ օրուան վերջաւորութեան այդ վաճառականները քահանաներուն կու տային անոնց շահաբաժինը, այդպէսով վաճառքի արտօնութիւն ձեռք ձգելու:

Անկասկած Յիսուս նախապէս տեսած էր այդ բոլորը, բայց այդ օրը հետեւորդներու մեծ բազմութիւնը հաւանաբար աւելի ոյժ տուաւ իրեն, այնքան մը որ ան յան-

կարծական որոշումով, մտաւ այդ վաճառականներու շարքերէն ներս եւ սկսաւ շրջել անոնց եւ լուծալափոխներու սեղանները եւ կոտորտել աղանիւններու վանդակները, մեծ տակնուվրայութիւն մը ստեղծելով բակին մէջ: Նախ՝ ուզեցի ծափահարել եւ շնորհաւորել զինք իր քաջութեան համար, սակայն զարմանքէս եւ մտահոգութենէս շնչահեղձ եղած էի, որովհետեւ ո՛չ այդ վաճառականները եւ ոչ ալ անոնց պաշտպանները պիտի հանդուրժէին այդպիսի խիզախ արարք մը: Անշուշտ այդ վայրկեանին անոնք վախնալով Յիսուսի աշակերտներէն ոչինչ կրնային ընել, սակայն անպայման շուտով վրէժը առնելու ծրագիր մը կը պատրաստէին:

Այդ օրը Յիսուսի հետ առանձին խօսելու առիթ չեղաւ: Սակայն յաջորդող օրերուն միշտ առիթներ եղան, եւ ես չափազանց համակրեցայ եւ տպաւորուեցայ այդ երիտասարդ Գալիլիացիի համարձակութենէն եւ քաջութենէն: Այլեւս վստահ էի թէ ան կրցած էր իր մատը դնել մեր ճիշդ կոտորացող վէրքին վրայ: Սակայն իր խօսքերէն աւելի ես սկսած էի հիանալ անոր անձին՝ խոհուն, հանդարտաբարոյ բայց միաժամանակ խիստ, այնպէս կ'երեւէր, որ ան ոչ մէկ բանէ կը վախնար: Եթէ ան մանկական պարզութիւն ունէր, միւս կողմէն ալ սակայն շատ արիասիրտ էր ու քաջ, օծուն բացառիկ իմաստութեամբ:

Հրէական աւանդութեան համաձայն սովորականին պէս Պասքի տօնը անցուցի ընտանիքիս հետ: Սակայն այդ երեկոյ յանկարծ կանչուեցայ Սանհետրին՝ յատուկ հանդիպման մը համար: Լաւ բան չէի ակնկալեր ծանր զգացումներով եւ մտահոգ հասայ Սանհետրին, ուր նախազգացումներս պիտի ճիշդ ելլէին: Հոն տեսայ Յիսուսը, բանտարկեալ, աւելի ետք պիտի լսէի թէ ան ձերբակալուած էր, իր անմիջական հետեւորդներէն մէկուն մատնութեան պատճառով: Ամբողջ գիշերը ան կանգնած մնաց մեր ներկայութեան: Կայափաս քահանայապետ փորձեց զինք ծուղակ ձգել անյարիր եւ անտրամաբանական հարցումներով եւ երբ չյաջողեցաւ լսել իր ակնկալած պատասխանները, հրահանգեց պահակներուն որ զայն ենթարկէին նաեւ մարմնական շարժարանքներու: Սակայն ես եւ Նիկողիմոսն էինք զինք պաշտպանողները: Ի վերջոյ մեծամասնութիւնը որոշեց խնդիրը յանձնել Պիղատոսի, միակ անձը, որ ի զօրու էր որոշելու Գալիլիացի Յիսուսի ճակատագիրը:

Պիտի չուզէի հոս կրկնել այդ առաւօտեան ցաւալի դէպքերը, երբ Յիսուս այլեւս կը գտնուէր խորամանկ Հռոմէացիին ներկայութեան, որ իր կարելին կ'ընէր խուսափելու Սանհետրինի հետ բացէ ի բաց խնդիրներ ունենալէ, որուն համար ալ վերջաւորութեան անմեղ անձ մը պիտի զոհէր, հաճելի թուալու այդ Սանհետրիկաններուն: Չեմ կարծեր երբեք գոյութիւն ունեցած ըլլայ անձ մը, որ այդքան համարձակ ու քաջ կերպով դիմագրաւէր իր ճակատագիրը: Մինչեւ կէսօր, արդէն այդ թատրոն-դատաստանը վերջացած էր, եւ որոշ էր որ այդ հրեշտականման մարդը մահուան պիտի դատապարտուէր, եւ այդպէս ալ եղաւ, յետ միջօրէին այդ բարի Գալիլիացին խաչ պիտի հանուէր, երկու ուրիշ մահապարտներու հետ:

Ճակատագրի բերումով այնպէս պատահեցաւ, որ մի քանի տարիներ առաջ, առիթէն օգտուելով, չափազանց յարմար գինով, քաղաքէն դուրս, Գողգոթայի բարձունքէն ո՛չ շատ հեռու ժայռափոր գերեզման մը գնէի ինծի համար: Երբ այլեւս Նազովրեցի Յիսուսի խաչի մահուան վճիռը տրուած էր, յանկարծ անդրադարձայ, որ այդ Գալիլիացիի հետեւորդները տեղ մը չունէին զինք թաղելու, եւ հաւանաբար ուրիշ հրեաներ եւս մերժէին որ ան թաղուէր այդ մօտերը, որովհետեւ երբ Պիղատոս թելադրած էր իր զինուորներուն Յիսուսի խաչին վրայ արձանագրութիւն մը դնել, որ կ'ըսէր. «Յիսուս Նազովրեցի, Թագաւոր Հրէից», որուն համար Սանհետրիկանները բողոքած էին առաջարկելով Պիղատոսի, որ գրէր. «Յիսուս ըսաւ, թէ ինք Հրեաներու Թագաւորն էր», որուն վրայ Պիղատոս հայցոյելով զիրենք վտարած էր քովէն, ըսելով.

«Զոր գրեցի, գրեցի»: Հիմնուելով այս տուեալներուն վրայ, ուզեցի մտնել իր մօտ եւ խնդրել որ արտօնէր ինծի նախքան Շաբաթը սկսիլը, Յիսուսը խաչէն վար առնել եւ իմ գերեզմանիս մէջ թաղել: Անշուշտ ան նախ պիտի մերժեր առաջարկս, սակայն երբ բացատրեցի կացութիւնը, հասկցաւ եւ արտօնեց որ թաղէի զայն հոն, թերեւս ալ ան խորհեցաւ թէ այդպէսով Կայիափաս քահանայապետն ու միւս Սանհետրիկանները աւելի անարգած կ'ըլլար: Անմիջապէս Նիկողիմոսի հետ պատանքներն, օծանելիքները պատրաստեցինք եւ պատշաճ ձեւով անոր մարմինը դրինք իմ գերեզմանս:

Այդ իրիկուն ամբողջ մտածումներու մէջ էի, թէ արդեօք ա՛յս էր վերջաւորութիւնը այդ Գալիլիացիի պատմութեան: Բայց մի քանի օրեր ետք պիտի գիտնայինք թէ վերջը այդ չէր: Արդէն լուրեր սկսած էին տարածուիլ թէ «Ան մեռած չէր, այլ կ'ապրէր»: Անոր Գալիլիացի հետեւորդները շուտով պիտի վերադառնային իրենց տուները տարածելու սերմերը իրենց յարութիւն առած Ռաբբիին, Երուսաղէմէն շուտով մինչեւ Հռոմ: Ես չարշարուած մարմին մը թաղեցի, սակայն յաւիտենական կեանքով լեցուն հոգի ու մարմին մը կ'ապրի ու իր կարգին կը տիրապետէ անհամար հոգիներու:

Յիսուսի մահուան յաջորդ օրը բարեկամ մը ըսաւ ինծի «Յովսէփ, դուն կատարեալ յիմար մըն ես, եթէ իսկապէս կ'ուզես անունդ կապել անոր անուան: Ան սորվեցուց բաներ զորս խորհեցաւ թէ մարդիկ պիտի հաւատան: Ան թագաւորութիւն մը կ'երազէր, սակայն անոր թագաւորութիւնը տեղ պիտի չունենայ աշխարհի միւս թագաւորութիւններու կողքին»:

Ու հարց տուի ինքզինքիս, «Տեղ պիտի չունենայ աշխարհի միւս թագաւորութիւններու կողքի՞ն». թերեւս այո՛, բայց ամբողջ էութեամբս կը հաւատամ, որ անոր տեղը այս աշխարհի թագաւորութիւններէն աւելի վեր է, որովհետեւ իր հետեւորդները կ'ըսէին «Օրհնեալ, որ գայ յանուն Տեառն»։ Այո՛, յաւիտեանս օրհնեալ է Ան, եւ օրհնեալ ըլլան բոլոր անոնք՝ որոնք կը հետեւին Անոր բոլորով սրտիւ:

Ն.Ա.Մ.

